

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՅՕ-118, 16 հունիսի 1997թ.) 6¹ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր պարբերությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն իրենց ցանկությամբ կարող են հրաժարվել սույն մասով սահմանված ԱԱՀ-ի գումարի վճարման ժամկետի հետաձգման հնարավորությունից եւ ԱԱՀ-ի գումարը վճարել որպես Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքներից հաշվարկվող եւ մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սահմանին գանձվող ԱԱՀ վճարներ:»:

Հոդված 2. 6¹ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր բովանդակությամբ՝ հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի առաջին մասում նշված ապրանքները մինչեւ նույն մասով սահմանված ժամկետների լրանալը օտարվելու կամ օգտագործման իրավունքով այլ անձանց հանձնելու (բացառությամբ վերակազմակերպման դեպքերի) դեպքում վճարումը հետաձգված՝ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները մինչեւ գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը ենթակա են վճարման պետական բյուջե՝ որպես մաքսային մարմինների կողմից գանձվող՝ ներմուծված ապրանքներից ԱԱՀ-ի վճարներ:

Սույն մասում նշված ժամկետում ԱԱՀ-ի գումարը չվճարվելու դեպքում հարկ վճարողից գանձվում է հետաձգված ԱԱՀ-ի գումարը եւ օտարման գործարքն իրականացնելու կամ օգտագործման իրավունքով այլ անձանց հանձնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ մինչեւ այդ գումարի վճարման օրը օրենքով սահմանված կարգով հաշվարկվող օրական տույժերը:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավելացված արժեքի հարկի մասին» (ՅՕ-118, 16 հունիսի 1997թ.) Հայաստանի Հանրապետության օրենքի 6¹ հոդվածի նպատակը կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին մի խումբ ապրանքների ներկրման դեպքում ԱԱՀ գումարների վճարման հետաձգման հնարավորության ընձեռումն է:

Այդ դրույթը գործում է իմպերատիվ, ինչը ավելորդ բյուրոկրատական խոչընդոտներ եւ դժվարություններ է առաջացնում այն գործարարների համար, որոնք ներկրում են ապրանքներ իրացման համար եւ ի սկզբանե չեն պատրաստվում օգտվել նշված հետաձգման հնարավորությունից:

Առաջարկվում է օրենքում նախատեսել կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի կողմից հետաձգումից հրաժարում եւ հարկի վճարում սահմանին՝ որպես մաքսային մարմիններին վճարվող ԱԱՀ գումար:

Հաջորդ փոփոխությունը վերաբերում է նույն հոդվածի երկրորդ մասին: Առաջարկվում է այդ մասը վերախմբագրել վերջին երկու խմբագրումների համադրությամբ՝ մասամբ վերադառնալով այն ձեւակերպմանը, որն ընդունվել էր 2008 թվականի դեկտեմբերին, համալրելով այն 2009 թվականին ներառված որոշ դրույթներով:

Սույն օրենքի ընդունումը կբարձրացնի հարկային վարչարարության արդյունավետությունը, ինչպես նաեւ կհեշտացնի հարկային մարմինների եւ գործարարների գործունեությունը՝ իրացման նպատակով հոդվածում նշված ծածկագրերի ապրանքների ներկրման դեպքում:

Չեղիսակներ՝ [Արա Նռանյան](#), [Վահան Հովհաննեսյան](#), [Արծվիկ Մինասյան](#), [Արտյուշ Շահբազյան](#), [Ռուզաննա Առաքելյան](#)